



# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Ըստ Աւանդութեան Եկեղեցւոյ Հայաստանեայց։

Ի Թուականութեանս Հայոց ՌՄԿԲ յուլիսի ԻԱ։

Ի Տպարանի Յովհաննիսի և Պօղոսի
Ի Կոստանդնուպօլիս քաղաքի





Ա/413
ՀԱՍՌ ԳԱ

Օրէնք որկանելոյ սպաս եկեղեցւոյ· Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել:

Պարտի այսպէս խորհրդածաբար զգեստաւորիլ:

Մտցէ յաւանդատունն հանդերձ սարկաւագօքն ուր զգեստքն են պատարագի:

Նախ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի:

Ասասցեն ապա· Սաղմոս ճլա Աձորդ·

ՔԱՀԱՆԱՅՔ քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն. փոխ:

Յիշեա՛ տր զդաւիթ և զամ հեզութիւն նորա: Որպէս երդուաւ տն. և ուխտ եդ այ յակոբայ: Թէ ոչ մտից ՚ի յարկս տան իմոյ. թէ ելից յանկողինս մահճաց իմոց: Թէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ արտևանաց իմոց. կամ հանգիստ ծնօտից իմոց. մինչև գտից զտեղի յարկի տն աստուածոյ յակոբայ: Ահա լուաք զնմանէ յեփրաթայ. և գտաք զնա ՚ի դաշտս մայրեաց: Մտցուք ՚ի յարկս նորա. երկիրպագցուք ՚ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա: Արի՛ տէր ՚ի հանգիստ քո դու և տապանակ կտակի սրբութեան քո: Քահանայք քո զգեցցին զարդարութի և սրբք քո ցնծալով ցնծասցեն: Վասն դաւթի ծառայի քո. մի՛ դարձուցաներ զերեսս օծելոյ քումմէ: Երդուաւ տէր դաւթի ճշմարտութեամբ և ոչ ստեաց նմա. ՚ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա: Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ և զվկայութիս իմ զոր ուսուցից նոցա: Որդիք

Որդիք նոցա նստցին յա
ւիտեանս յաւիտենից
յաթոռ քոյ ։

Հաճեցաւ տէր ընդ սիօն ·
և ընտրեաց բնակել ՚ի նը
մա · ասէ այս է՛ հանգիստ
իմ յաւիտեանս յաւիտե
նից · ՚ի սմա բնակեցայց
զի հաճեցայ ընդ սա ։

Զայրիս սորա օրհնելով
օրհնեցից · և զաղքատս
սորա լցուցից հացիւ ։

Քահանայս սորա զգե-
ցուցից զփրկութիւն · և
սուրբք սորա ցնծալով
ցնծասցեն ։

Անդ ծագեցից եղջիւր
՚ի դաւիթ · պատրաստ ա-
րարից ճրագ օծելոյ իմոյ ։

Թշնամեաց սորա զգեցու
ցից ամօթ · և ՚ի վերայ
նորա ծաղկեսցի սրբու-
թիւն իմ ։

Փառք հօր և Որդւոյ և
Հոգւոյն Սրբոյ · Այժ"։

Եւ քարոզեսցէ Սարկաւագն․

Եւ ևս խաղաղութեան զՏէր
աղաչեսցուք ։

Խնդրեսցուք Հաւա-
տով միաբանութբ ՚ի Տեառնէ,

Զի ողորմութեամբ ըզ
շնորհս իւր արասցէ ՚ի
վերայ մեր ։

Ամենակալ տէր ած մեր,
Կեցուսցէ և ողոր"։

Եւ Ասասցեն Աշխարհականն
Տէր ողորմեայ․

---

Ով սրբազան պատա-
րագիչ Յիշեա՛ Յաղօթս
Քոյս Զմատակարար
Գործարանիս ։

Եւ զհօրն Ննջեցելոյ
նորին ՚ի Քս Յս ։


ՅՆԹՀ

Աղօթք Նախնական Պատարագիչ Քահանային
Յառաջ քան Զգեստաւորելն ։

# ՈՐ ԸԶԳԵ
# ՑԵԱԼ ԵՍ ԶԼՈՅՍ ՈՐՊԷՍ

հանդերձ Տէր մեր Յ՟ս Ք՟ս։ Անճառելի խոնարհութեամբ յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի և զարդարեցեր զեկեղեցի քո ս՟ր։ Տէր ամենակալ որ պարգևեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ։ Արժանի արա և զիս ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո։ Որ համարձակեցայ մերձենալ ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քոց։ Որ՟պ զի զա՟մ ամբարշտութիւնս մերկացեալ որ է հանդերձ պղծութեան և զարդարեցայց լուսով քով ։ Ընկեա՛ յինէն զչարիս իմ, և թօթափեա՛ զյանցանս իմ։ Որ՟պ զի արժանի եղէց հանդերձեալ լուսովդ առ ի քէն։ Շնորհեա՛ ինձ քահանայական

փառօք մտանել 'ի պաշտօն սրբութեան քոյ, ընդ այնոսիկ որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո։ Զի և ես պատրաստ գտայց երկնաւոր առագաստին ընդ իմաստուն կուսանսն. փառաւորել զքեզ Քս որ բարձեր զմեղս ամենեցուն։ Զի դու ես սրբութիւն անձանց մերոց և քեզ բարերարիդ այ վայելէ փառք իշխա''։

Եւ մատուցեալ Սարկաւագունքն՝ Օգնեսցուսցեն նմա զհանդերձն առնլով. Եւ նա խոստովանութեամբ։ Քահանայն Օրհնութիւն։ Եւ յետ օրհնութեան դիցէ յառաջ զխոյրն 'ի գլուխն և ասասցէ։



ԻՐ ՏԷՐ սաղաւարտ փրկութեան 'ի գլուխ իմ, պատերազմել ընդ զօրութիւնս թշնամւոյն։ Շնորհօք Տն մերոյ Յի Քի որում փառք''։

Շապիկն։

Զգեցո՛ Տէր ինձ համդերձ փրկութեան։ և պատմուճան ուրախութեան։ Եւ շուրջ պատեա՛ զզգեստս փրկութեան։ Շնորհօք։

Փոր Ուրարն։

Զգեցո՛ Տէր պարանոցի իմոյ զարդարութիւն։ Եւ սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց։ Շնորհօք։

Գօտին։

Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ և մտացս։ Եւ չորացուսցէ 'ի սոցանէ զխորհուրդս աղտեղիս։ Եւ զօրութիւն շնորհաց քոց յամենայն ժամ բնակեսցէ 'ի սոսա։ Շնոր''։

Բազպանն յաջ ձեռն։

Տո՛ւր Տէր զօրութիւն յաջոյ ձեռին իմոյ, և լուա՛ զամենայն աղտեղութիւնս իմ։ Որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անխախտութեամբ հոգւոյ և մարմնոյ։ Շնորհօք։

Բազպան յահեակ ձեռին։

Տուր Տէր զօրութիւն ձախոյ ձեռին իմոյ, և լուա՛ զիմ աղտեղութիւնս իմ։ Որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ։ Շնոր"

Վակասն։

Օձեա՛ Տէր պարանոցի իմոյ զարդարութիւն։ Եւ՛ սրբեա՛ զսիրտ իմ յամ աղտեղութենէ մեղաց։ Շնորհօք։

Նափորտն որ է շուրջառ։

Ի ողորմութիւն քում զգեցո՛ ինձ զգեստ պայծառ և պատրաստեա՛ ընդ դէմ ներգործութեան չարին։ Զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անուանդ։ Շնորհօք։

Յետ զգեստաւորելոյ սրբազան զգեստուցն ասէ։

Ցնծասցէ անձն իմ՚ի Տէր զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան. իբրև փեսայի եդ ինձ պսակ. և որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս։ Շնորհօք։

Թաշկինակն։

Սրբեա՛ Տէր զձեռս իմ յամ աղտեղութենէ մեղաց։ Շնորհօք տն մերոյ Յի.Քի։

Եւ յետոյ եկեսցեն առաջի դրան սեղանոյն։ Եւ քահանայն լուասցէ զձեռս ասելով։ Սաղմոս. ԻԵ. կց.

Լուացից սրբութբ զձեռս։

Յորդորակն փ.խ.

Դատ արա ինձ Տէր զի ես անմեղու"։

Քահանայն։

Եւ մտց սրբուհւոյ ածա։

Յորդորակն։

Ած զմտածմունս և զամենայն տես բարի"։

Քահանայն։

Ընկալ Տէր զաղաչանս մեր։ Խոստովանիմ առաջի այ և սրբուհւոյ ածածնին. և առաջի ամ սրց. և առաջի ձեր հարք և եղբարք զամ մեղս զոր գործեալ եմ, Քանզի մեղայ խորհրդով բանիւ, և գործով. Եւ ամ

ա՟մ մեղօք զոր գործեն մարդիկ ։ Մեղայ, մեղայ ։ Աղաչեմ զձեզ խնդրեցէք վ՟ս իմ յ՟այ զթողութի՟ ։

Պատասխանեսցեն որք մերձն են՝

Ողորմեսցի՛ քեզ ա՟ծ հզօրն և թողութի՟ շնորհեսցէ ա՟մ յանցանաց քոց, անցելոյն և այժմուս, և յառաջակայէն փրկեսցէ և հաստատեսցէ յա՟մ գործս բարիս ։ Եւ՛ հանգուսցէ զքեզ ՚ի հանդերձեալ կեանսն ․ Ամէն ։

Պատասխանեսցէ և ինքն՝

Ազատեսցէ՛ և զձեզ մարդասէրն ա՟ծ, և թողցէ զա՟մ յանցանս ձեր ․ տացէ ժամանակ ապաշխարելոյ և գործելոյ զբարիս ․ ուղղեսցէ և՛ զառաջակայ կեանս ձեր շնորհօք սր՟ հոգւոյն հզօրն և ողորմածն և նմա փառք յաւիտեանս ամէն ։



Դպիրն՝

Յիշեսջիր զմեզ Առաջի անմահ գառին ա՟յ՝

Քահանայն՝

Յիշեալ լիջիք Առաջի անմահ Գառին ա՟յ ։

Դպիրքն՝ Սաղմոս ․ Ղ․Թ ․ փոխ՝

Աղաղակեցէք առ ա՟յ ա՟մ երկիր ծա՟՝՝

Սարկաւագն Քարոզէ ։

Մ՟ե եկեղեցեաւս աղաչեսցուք զտէր՝

Քահանայն ։

Ի մէջ տաճարիս և առաջի ա՟ծընկալ և պայծառացեալ ս՟ր նշանաւս և ս՟ր սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ՛ երկրպագանեմք ս՟ր և զհրաշալի և զյաղթօղ զյարութի՟ քո փառաւորեմք և քեզ մատուցանեմք զօրհնութի՟ և զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ ս՟րյ այժմ և՟ ։

Քահանայն ասասցէ սաղմոս ․ Խ՟Է ․ կցորդ․
Եւ՛ եկեալ ՚ի խորանն ։

Մտից առաջի սեղանոյ ։

Սարկաւագն փոխ՝

Դատ արա ինձ ա՟ծ իմ և իրաւ արա ինձ՝՝ ։

Սարկաւագն քարոզէ ։

Եւ՛ ևս խաղաղութեան զտէր աղա՟՝՝

Օրհնեսցուք զհայր տն մերոյ յի քի որ արժանի ա_
րար զմեզ կալ ՚ի սեղանոյս փառաբանութե և երգել զերգս հոգևորս ամենայն՛:

Յոհանայն .

՚Ի յարկի սրբութե և ՚ի սեղանոյս փառաբանութե . հրրեշտակաց բնակարանիս և մարդկան քաւարանիս , առաջի ած ընկալ և պայծառացեալ որ նշանացս և որ սեղանոյս խոնարհեալ երկնաւորէ երկիրպագանեմք . Տէր և զհրաշալի և զյաղթօղ զանէրութ՞եդ քո օրհնեմք և փառաւորեմք . և քեզ ընդ երկնայինն զօրան մատուցանեմք զօրհնութի և զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ որ այժմ և միշտ և յաւէ տեանս յաւէ տենից. Ամէն:

Գ.

Իսկ եթէ եպիսկոպոս ընթեռցի խորհրդածութն՝ ասացէ ՚ի սեղ ընծայուն զպատարագին եմ խորանին: Իսկ մատուցեալ առ ընծայաբան սեղանոյն: Իսկ ՚ի ծածկել ամենեն յարդահոս արարողեալ ըստ և անմահանոց ասացէ զաղօթս առ սուրբ հոգին անօրհնրն գործոյն .

Գրիգորի Նարեկացոյն .

ԱՄԵՆԱկալ բարերար մարդասէր ած բոլորից , յորինօղ երևութից և աներևութից , փրկօղ և հաստատօղ , խնամօղ և խաղաղարար , հօր հզօր հոգի , հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութե յանդիման եղեալ քեզ ահաւորիդ :

Մատչիմք մեծաւ դողութբ՝ սաստիկ երկեղիւ մատուցանել . նախ զզանակամս զայս պատարագ՝ քում անզննին զօրութեդ ,

իբր

Գ

Իբր աթոռակցի փառակ֊
ցի և արարչակցի՝ Հայրե֊
նի անսկսականաւ պատուոյդ,
և քննողի ծածկութեան
խորոց խորհրդոց ամենա֊
կատար կամաց հօրդ էին
նուէրն՝ զքեզ առաքէր,
փրկչի և կենդանատուի և
արարչի մեր: ՚Ի ձեռն քո
ծանուցաւ մեզ երրեակ
անձնաւորութիւն միա֊
նականն ա̃ծութեանդ, յորոց
մի և դու ճանաչիս անհաս:
Քե̂ և ՚ի ձեռն քո ա֊
ռաջինքն նահապետականն
տոհմին շառաւիղք՝ ա֊
սանօղք ան̂ անմահակցեալք,
պանծեալն և զգալոյսն,
զեղջերն և զօձ գոյացեալ֊
ալն, անբառնէ բարբառ բար֊
բառով բանի մերպաղա֊
մեցին:
Հոգի ա̃յ քարոզեալ ըզ֊
քեզ մխիթարի, որ ՚ի գը֊
նալն քո ՚ի մերայ Ձորդն՝

անպարագիր զօրութիւն,
ահեղ շրջապարիւք տածո֊
ղականա̂՝ թևապարփակ
պաշտպանողօրէն գթառ֊
բեալ ՚ի ծնունդս նորոգս՝
զան̂ապականն խորհուրդ
ծանուցեր:
Յո՛ր կերպարան օրհնակու֊
թեան՝ նախ քան զկատու֊
ցանել զլոյծդ մածուած
մերձնուլ փարագուրեր՝
յօրհնեցեր կարօղ տիրա֊
պէս զբովանդակ բնու̃ս
ամենեցից բնաւ̂ից բոլորից
գոյից ա̃մ էից՝ յանէից:
Քեւ ստեղծանին ՚ի նո֊
րոգուն յարութէ ա̃մ եղէլ
քրս առ ՚ի քէն՝ յոյժմ
ժամանակի, որ է օր մեր֊
ջին՝ այսմ կենցաղի, և օր
առաջին՝ երկրին կենդա֊
նեաց: Քեզ հնազանդե֊
ցաւ̂ միութ̃ կամացն՝ ա̃մ
հօրն խորհուրդ, ազգակիցն
քո՝ էակիցն հօր՝ անդրա֊
նիկն

նիկն որդի · մերում կեր֊
պիւ ընդ քեզ աստուածա֊
նեալ ճշմարիտ ած՝ հա֊
ւասար և համագոյ հօր
իւր հզօրիւ զառ ՚ի քեզ
հայհոյութիւնսն անքաւե
լի քարոզեաց , և իբր
զած անմարմնոյն զքո հես֊
տեղոյն՝ չարաչարանական
բերանս կարկեաց , եւ
զիւրն շնորհեաց՝ արդարն
և անարատն՝ գառինն ամի ·
որ վասն մեղաց մերոց մատ
նեցաւ , և յարեաւ վասն
զմեզ արդարացուցանելոյ ։
Նմա փառք ՚ի ձեռն քո ,
և քեզ բարեբանութիւն
ընդ հօր ամենակալի
յաւիտեանս յա֊
ւիտենից ·
Ամէն ։

Գործեալ կրկնեցից ՚ի նոյն կարգ բանի ,
մինչև վասահութիւն վերջացուցութն
լուսոյ՝ հրաշափառս յոյսնացի ։ Նորոգեալ
աստուածաբանեալ վերստին կրկին փառաբա֊
նութիւն ։

## ԳԼ. ՃԸՍՈՒ

Աւ աղերսեմք որ
աստուածալից հա֊
ւատովք յամ անձինք՝ ընդ
փառաւորեալ արարչու֊
թիւնդ՝ անեղծ և անլու֊
սեղծ անժամանակ հօ֊
րոյդ գթածի , որ բարե֊
խօսդ ես վասն մեր յան֊
մոռանչ հեծութբ՝ առ
ողորմածդ հայր · որ զմեզ
պահես , և զմեղուցեալս
մաքրես՝ և ստանաս կազ
մես կենդանի և կեցու֊
ցես կամաց բարձրեալդ
հօր ։ Ընդ՝ աղաւնեաւ ընդ
մեզ յամ անմաքուր գոր
ծոյ , որ ոչ է համայքումն
բնակութբ · և մի՛ չիցեն
առ ՚ի մէնջ լուսոյդ շնոր֊
հաց փայլմունք ՚ի տեսակս
նոցա

նայս աչաց խնամոտից · վ՟ն զի դ՛քեզ ուսաք մխտալ ’ի մեզ ’ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց:

Եւ քանզի մեք յերրորդութենէդ պատարագել, և միւսոյ ընդունին՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի խոյոյ· իսկ դու ընկալցես զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթևանս պատուականս քո պատրաստութեամբ՝ ’ի վայելումն ճաշակմանն երկնաւո՛ր գառինդ, առանց պատժոց դատապարտութեան՝ ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան:

Եւ հալեսցի՛ ’ի հրոյս յայսմանէ զայթակղութիւնս մեր, որպ՟ մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն՝ ’ի ձեռն ունելեացն մատուցման· զի յամ՟ քոյդ քարոզեսցի գթութիւն, որպէս որդւոյն տ՟ր Հօր քաղցրութե՟· որ զանառակ որդին մերձեցոյց ’ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութեանն՝ արդարոցն երանութե՟:

Այս՛ այս՛՝ և ես մի եմ ’ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութե՟ կարօտեալ մեծի, շնորհօք քո ազատեալ, զարեամբ քո աստուածեալս:

Զի յայտ՟ն ամ՟ յամի ծանիցի քո՛ մեծութիւնդ՝ ընդ Հօր փառաւորեալ համապատուար ’ի մի կամս, և ’ի մի իշխանութիւն գովութեան:

’ի Ձայն.

Զի քո՛ է գթութիւն, և կարողութիւն, և մարդասիրութիւն, զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եղբ յարուցեալ գոյ առ ընծայարան սեղանոյն։ Եւ որ մատուցանէ նախատար կաւագն ձիլխարն։

Զոր առեալ Քահանային դնէ ՚ի մաղզ մայն ասելով։

Յիշատակ տեառն մերոյ յիսուսի քի։

Որ բազմեալ հանգչի յան արուեստ աթոռ. զմահ խաչի յանձն էառ վասն ազգի մարդկան. օրհնեցէք՝ դովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Եւ առեալ զգինին՝ արկանէ խաչանիշ ՚ի սկիհն ասելով։

Յաղագս յիշատակի փր կագործ տնօրէնութեան տն այ և փրկչին մերոյ յի քի։

Որ ՚ի կողահոս արեան ազ բերէն նորոգեցան արարածք և անմահացան օրհնեցէք՝ դովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Եւ ասացէ զաղօթս ՚ի ծածուկ Յօհաննու Ոսկէբերանին։





Տէր ած մեր որ զերկնաւոր հացդ զտէրն մեր յս քս զկերակուր ամ աշխարհի՝ առաքեցեր փրկիչ և կեցուցիչ և բարերար՝ օրհնել և սրբել զմեզ. ինքնին դու տէր օրհնեա և այժմ զառաջադրութիս զայս։ Եւ կալ զսա յերկնայինն քո սեղանդ։

Յիշեա՛ որպէս բարերար և մարդասէր զմատուցօղս և զնս որոց մատուցանի։ Եւ զմեզ անդատապարտ պահեա՛ ՚ի քահանայագործութն ածայինն խորհրդոց քոց։ Զի տր և փառաւորեալ ամենապատիւ մեծայելչուն փառացդ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ այժմ և՛։

Եւ պռօղեսցէ ասելով. Սաղմոս. ՂԲ։

Տէր թագաւ։ Հաստատ։ Ամբարձան։ ՚Ի ձայնէ։ Սքանչելի։ Տան քում։

Եւ խաչակնքեսցէ երիցս ասելով ։

Հոգին սուրբ եկեսցէ ՚ի քեզ եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ՚ի վերայ քո ։

Եւ արկանէ զխունկն ասելով ։

Խունկ մատուցանեմք առաջի քո Քս բուրումն հոգեւորական ։ Ընկալ ՚ի սբ յերկնային եւ յիմանալի քո մատուցարանդ ՚ի հոտ անուշից ։ Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս եւ զպարգեւս Հոգւոյդ սրբոյ ։ եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ սբյ այժմ" ։

Եւ ապա խնկելով ՚ի մէջ եկեղեցւոյն իջանէ հանդերձ սարկաւագօքն, եւ ելեալ ՚ի վեր երիցս երկրպագեսցէ զսեղանն ։ Եւ նախասարկաւագն ՚ի մէջ եկեղեցւոյ կալով ձայնեսցէ ։

Օրհնեա՛ տէր ։

Եւ քահանայն ՚ի ձայն ասասցէ ։

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սբյ այժմ եւ" ։

Եւ սկսանին դպիրքն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն ։ Եւ յաւարտելն՝ ձայնեսցէ նախասարկաւագն ։ Եւ եւս խաղաղութեն զՏր աղաչեսցուք ըն" ։ Օրհնեա՛ տէր ։

Եւ քահանայն ասասցէ ։

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ" Խաղաղութիւն ամենեցուն ։

Դպիրքն ։

Եւ ընդ հոգւոյդ քում ։

Սարկաւագն ։

Աստուծոյ երկրպագեսցուք ։

Դպիրքն ։

Առաջի քո տէր ։

Եւ քահանայն ասասցէ ՚ի ձայն ։

Տր ած մեր՝ որոյ կարողութիւնդ անքննելի է ․ եւ փառքդ անհասանելի ։ Որոյ ողորմութիւնդ անչափ է ․ եւ գթութիւնդ անբաւ ։ Դու ըստ առատ մարդասիրութեանդ քում նայեաց ՚ի ժողովուրդս քո՝ եւ ՚ի տաճարս այս սբ ։ Եւ արա ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր՝ առատապէս զողորմութիւնս քո եւ զգթութիւնս ։ Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յա" ։

Եւ

Եւ սկսանին ասել դպիրքն սաղմոս և շարական ըստ պատշաճին:

Եւ մինչ նոքա երգեն, Քահանայն ասասցէ զաղօթս ի ծածուկ:

Տէր Աստուած մեր կեցո զժողովուրդս քո. և օրհնեա զժառանգութիւնս քո. զլրումն եկեղեցւոյ քո պահեա՛. սրբեա՛ զսոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո: Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով. և մի՛ թողուր զյուսացեալս ի քեզ: Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւ": 

Խաղաղութիւն ամենեցուն:

Որ հասարակաց զայս և միաձայն մեզ ամենեցուն՝ ուսուցեր աղօթել. և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգևել խոստացար: Դու և այժմ զծառայից քոց զխնդրուածս առ ի յօգուտ կատարեա՛: Շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն քում ճշմարտութեանդ: Եւ ի հանդերձեալն ըզ կեանսն յաւիտենականս պարգևելով: Զի բարերար և մարդասէր ես Աստուած. և քեզ վայելէ փառք իշ":

Եւ ի փառս տանն դպրաց, երկիրպագութեան առաջի բեմին ամենեքեան:

Եւ քահանայն երկրպագելով սեղանոյն ասասցէ զաղօթս ի ծածուկ.

Տէր Աստուած մեր՝ որ կարգեցեր յերկինս զդասս և ըզ զինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց ի ըսպասաւորութիւն փառաց քոց: Արա՛ այժմ ընդ մուտս մեր մտանել և ընդ հրեշտակաց. և լինել պաշտօնակից մեզ՝ և փառաբանակից քում բարերարութեանդ:

ի Ձայն:

Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս": Ամէն:

Եւ

Եւ՛ համբուրեսցեն զսեղանն: և սարկա-ւագունքն գոհասցեն:

Պրօսխումէ՛:

Եւ՛ սարկաւագաց մի ոմն բարձրացու-ցանէ զաւետարանն սբ:

Եւ՛ դպիրքն ըստ խորհրդոյ աւուրն եր-գեն զերեք սրբեանն:

Սբ ած սբ և հզօր սբ և անմահ որ խա-չեցար և այլն:

Եւ՛ քահանայն զոյգ ամէն ասասցէ:

՚Ի ծածուկ:

Աստ՛ սբ՝ որ ՚ի սբս հանգ-ուցեալ ես, և երեք սրբ-եան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ՝ և քերովբէք փառաբանեն. և ամ երկ-նային զօրութիւնք՝ քեզ երկիրպագանեն: Որ ՚ի չէ գոյէ ՚ի գոյ ածեր զամ ա-րարածս. որ արարեր զմար-դըն ըստ պատկերի քում և նմանութեան. և ամ շնոր-հիւ քով զնա զարդարե-ցեր. և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգօնութիւն: Եւ՛ ոչ անտես արարեր զմեղուցեալն այլ եդեր

՚Ի

՚ի վերայ նր ապաշխարու-թն փրկութն: Որ արժա-նի արարեր զմեզ զխոնա-րհեալ և զանարժան ծա-ռայս քո ՚ի ժամուս յայս-միկ, կալ առաջի փառաց սրբութն սեղանոյ քոյ: Եւ՛ զօրհնաբանեալ երկրպա-գութն և զփառաբանու-թիւն մատուցանել քեզ: Դու տր՝ ընկալ ՚ի բերա-նոյ մեղաւորացս զերեք սրբեան օրհնութս. և պա-հեա զմեզ քոյին քաղցրու-թբդ. թող մեզ զամ յան-ցանս մեր զկամաւորս և զակա-մայս: Սրբեա զհոգի՛ զմե-րս՝ և զմարմինս մեր. և շնորհեա ՚ի սրբութն պաշ-տել զքեզ զամ աւուրս կենաց մերոց: Բարեխօ-սութբ սրբուհւոյ ածած-նին և ամ սբց քոց՝ որք յա-ւիտենից քեզ բարեհա-ճոյ եղեն: Զի սբ ես տր

ած

տծ մեր. և քեզ վայելէ փառք իշխանութի՛ւն և պա-տի՛ւ այժմ և միշտ և յա՛:

Սա՛ ՚ի կատարել երեք օրհնոյն և աղօ-թիցն՝ սարկաւագն քարոզէ.

Սա՛ եւ խաղաղութեան զտէր աղա՛.
Վ՛ն խաղաղութեան ամենայն աղ՛.

Սա՛ քահանայն՝ բազկատարած ասասցէ զաղօթս ՚ի ծածուկ.

Տէ՛ր ած մեր՝ զբազկատարած զաղաչանս ծառայից քոց մեր ընկալցիս և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութե քում: Օգնութի քո առաքեա ՚ի վերայ մեր և ամ՛ ժողովրդեանս՝ որք ակն ունին առ ՚ի քէն ա-ռատ ողորմութեանդ:

Սարկաւագն ձայնեսցէ.

Օրհնեա տէր.

Սա՛ քահանայն ասասցէ ՚ի Ձայն:

Զի ողորմած և մարդա-սէր ես ած գոլով և քեզ վայելէ փառք իշխանութի և պատի՛ւ այժմ և՛:

Ս



Ցետ այսորիկ՝ երկրպագէ սեղանոյն քահանայն, և եկեղ բազմի յաստիճանն. և սկսանին դպիրքն ասել ըստ խորհրդոյ աւուրն.

Սա՛ ընթերցցին զգիրս մարգարէականս և զառաքելականս.

Սա՛ զկնի ալէլուիայ, ըստ ցուցմանելոյ ըն-թերձուածոյն. և յաւարտմանն.

Սարկաւագն ձայնեսցէ.

Օրթի.

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ՚ի վերայ ժողովրդեանն ասելով:

Խաղաղութի ամենեցուն:

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում.

Սարկաւագն.

Երկիւղածութեամբ լուարուք.

Սարկաւագն.

Սրբոյ Աւետարանիս Որ ըստ Մատթէոսի.

Դպիրքն.

Փառք քեզ տէր ած մեր.

Սարկաւագն.

Պրօսխումէ.

Դպիրքն.

Ասէ Աստուած.

Սա՛ Սարկաւագն ընթերձցի Զաւետարանն Սուրբ. Սա՛ յաւարտմանն ասասցեն Ամենեքեան.

Փառք քեզ տէր ած մեր:

Սա՛ ապա ասեն զնիկիական դաւանութի ՚ի լման:

Հա

# ՀԱՒԱՏԱՄՔ

ի մի Աստուած Հայր ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս զՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին. այսինքն յէութենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։

Նոյն ինքն ի բնութենէ Հօր որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք։

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ մարդացաւ ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով։

Որով էառ մարմին հոգի և միտ. և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Չարչարեալ խաչեալ թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, ի դատել զկենդանիս և զմեռեալս։

Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ի սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն։

Որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս։

Որ էջն ի Յորդանան քարոզեաց զառաքեալսն և բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի։

Ի

Ի մի մկրտութի՛ն, յապաշ_
խարութի՛ն, ՚ի քաւութի՛ն,
և ՚ի թողութի՛ն մեղաց։
Ի յարութիւն մեռելոց։
Ի դատաստանն յաւիտե_
նից։ Հոգւոց և մարմնոց
յարքայութե՛ն երկնից, և՚ի
կեանսն յաւիտենականս։
Իսկ որք ասենն՝ էր երբե_
մն յորժամ ո՛չ էր որդին.
կամ էր երբեմն յորժամ
ո՛չ էր սբ Հոգին. կամ թէ
յոչ էից եղեն, կամ յայլմէ
էութէ ասեն լինել զոր_
դին այ. և կամ զսբ Հոգին
և թէ փոփոխելիք են կամ
այլայլելիք, զայնպիսիսն
նզովէ կաթուղիկէ և ա_
ռաքելական սբ եկեղեցի։

Լուսաւորչին ասացեալ.

Իսկ մեք փառաւորեսցուք
որ յառաջ քան զյաւիտեանս
երկիրպագանելով սբյ եր
րորդութե՛ն և մի ածութե՛ն
Հօր և որդւոյ և Հոգւոյն
սբյ. այժմ և՛՛։

Սարկաւագն քարոզէ ՚ի ձայն.
Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչ՛՛.
Դպիրքն տէր ողորմեա.
Եւ ևս Հաւատով աղաչես՛՛.
Մինչ նոքա երգեն, քահանայն ասասցէ
զաղօթս ՚ի ծածուկ.

Տէր մեր և փրկիչ յիսուս քս
որ մեծդ ես ողորմութե՛,
և առատ պարգևօք բարե
րարութե քո։ Որ դու
քոյին կամաւ ՚ի ժամուս
յայսմիկ համբերեցեր չար
չարանաց խաչի և մահու
յաղագս մեղաց մերոց։
Եւ պարգևեցեր առա_
տապէս զպարգևս Հոգ_
ւոյդ սրբոյ երանելի ա_
ռաքելոցն։
Հաղորդս արա և զմեզ տր
աղաչեմք զքեզ ածային
պարգևացդ. թողութե
մեղաց՝ և ընդունելութե
Հոգւոյդ սրբոյ։

՚ի Ձայն.

Որպէս արժանաւորք եղի_
ցուք գոհութե փառաւորել
զքեզ ընդ Հօր և սբ Հո՛՛։

Խա

Խոստովանութիւն ամենեցուն ։

Խոստովանիմ քեզ Քս Փրկիչ մեր՝ որ ՚ի մէջ էս քան զամ միտս եւ զբանս ։

Մեղայ զմեզ եւ աներկիւղ պաշտեալ յամ չարէ․ հաւատարեալ զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո՝ որք հոգւով եւ ճշմարտութեամբ քեզ երկրպագանեն․ վս զի ամենայնք երրորդութեան վայելէ փառք իշխան՞ ։

Օրհնեալ Տր մեր յս քս ։ Ամէն ։

Սարկաւագն․

Օրհնեա տէր ․

Քահանայն խաչակնքէ ՚ի վերայ ժողովրդեանն ասելով ՚ի ձայն ։

Տր ամ օրհնեսցէ զա՞ ։

Եւ այսուհետեւ՝ եթէ եպիսկոպոս իցէ ՚ի բաց հանցէ զեմիփորոնն ։

Սարկաւագն․

Աղօթս ասասցուք տեառն այ մեր՞ ։

Դպիրքն ասեն զերբասացութիւնն ըստ խորհրդոյ աւուրն ։

Սարկաւագն․

Մի որ յերկնից ․

Դպիրքն․

Սուրբն տէրունական ․

Ն

Եւ գան խնկարկելով ՚ի սուրբ խորհուրդն ։

Սարկաւագն․

Յարեաւ եհար գլու՞ ։

Դպիրքն․

Եւ ցնծա նս որդւոյ հօր՞ ։

Եւ տուր եղանակեսցեն ։

Սբ զբոբեսյն ․

Ապա Սարկաւագն վերաբերեսցէ սրբազան հացն՝ եւ անմահութե բաժակն ՚ի սբ սեղանն ։ Եւ մինչ նոքա երգեն՝ քահանայն խոնարհեսցի առաջի սբյ սեղանոյն եւ խորհրդաբար աղօթեսցէ ՚ի ծածուկ ։

Ոչ ոք արժանի է յըմբռնելոյս մարմնաւոր ախտիւք եւ ցանկութբ մատչել ՚ի սեղան քո․ կամ՝ սպասաւորել արքունական փառաց քոց ։ Քանզի պաշտել զքեզ մեծ եւ ահաւոր՝ երկնաւոր զօրութեանց իսկ է ։ Այլ սակայն վս անչափ բարերարութե քո՝ անպարագրելի բանդ հօր եղեր մարդ՝ եւ քահանայապետ մեր երեւեցար ։ Եւ իբր Տր ամենեցուն այսմ սպասաւորութե՝ եւ անարիւն զենման՝ զքահանայութիւն աւան

աւանդեցեր մեզ։
Ա՟ զի դու ես տէր ա՟ծ
մեր որ տիրես երկնաւորաց
և երկրաւորաց։ Որ ՚ի
վ՟ր քերոբէական աթոռոյ
բազմիս․ սերոբէից ս՟ր և
թագաւոր իշխես։ Որ միայն
ս՟ր ես և ՚ի ս՟րս հանգուցեալ։
Աղաչեմ զ․քեզ միայն բա
րերար և հեշտալուր․ նայ
եա՛ յիս ՚ի մեղուցեալ և
յանպիտան ծառայս քո։
Եւ սրբեա՛ զհոգի և զ
միտս իմ յամ պղծութե
չարին։ Եւ բաւականացո՛
զիս զօրութ՟բ ս՟ր հոգւոյդ
որ զգեցեալ եմ զ․քահա-
նայականս շնորհ, կալ ա-
ռաջի սրբոյ սեղանոյս և
քահանայագործել զ․քո ա-
նարատ մարմինդ և զպատ
ուական արիւնդ։ Քեզ
խոնարհեցուցեալ զպարա
նոցս իմ, մաղթեմ․ մի՛ դար
ձուցաներ զերեսս քո ՚ի
Օ



նէն․ և մի՛ մերժեր զիս ՚ի
ծառայից քոց։ Այլ ար
ժանի արա՛ մատուցանել
քեզ զընծայս զայս յինէն
՚ի մեղուցեալ և յանար-
ժան ծառայէս քումմէ։
Ա՟ զի դու ես որ մատու-
ցանես՝ և մատչիս՝ և ընդ-
ունիս և տաս ք՟ս ա՟ծ մեր։
Եւ քեզ փառս մատուցա
նեմք հանդերձ անսկզբ
բըն քո հօրդ և ամե
նասուրբ և բարե
րար հոգւոյդ․
այժմ և միշտ
և յաւի՛։

Եւ ընծայքն վերաբերին ՚ի սեղանն։

Եւ քահանայն խնկեսցէ և լուասցէ ըզ մատունսն ասելով․

Լուացից սրբութ՟բ զձե՛։

Սաղմոսն․

Եւ ես խաղաղութեան զտէր աղա՛․
Եւ ես հաւատամ և սրբու՛․

Մինչ նոքա քարոզեն․ Քահանայն բաղ կատարած աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Տր

ՏԷՐ զօրութեանց և արարիչ ամ լինելութեանց: Որ յանէութենէ զընաւս ՚ի գոյացութիւն ածեալ գոյացուցեր: Որ և զմերս զհողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս: Ի պայծառ ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Դու տէր՝ որում պատարագեմք զպատարագիս ընկալ առ ՚ի մէնջ զառաջադրութիւս զայս, և առարեալ զսա ՚ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ. դեղ թողութեան մեղաց պարգևեա՛ ճաշակողացս զհացս զայս և զբաժակս:

՚ի Ձայն.

Շնորհօք և մարդասիրութբ տն մերոյ և փրկչին յի քի · ընդ որում քեզ հօր միանգամայն և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխան":

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ Եւ ընդ հոգւոյդ քում.

Սրկ Աստուծոյ երկրպագեսցուք.

Դպ Առաջի քո տէր.

Սրկ Ողջոյն տուք միմեանց ՚ի համ".

Դպ Քս ՚ի մէջ մեր յայտնեց".

Եւ համբուրեն զսեղանն և զմիմեանս. և սարկաւագն ձայնեսցէ:

Ահիւ կացցուք երկիւղիւ կաց".

Դպ Առ քեզ աստուած.

Սրկ Պատարագ քն մատ".

Դպ Ողորմութիւն և խաղաղու".

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և ասասցէ ՚ի Ձայն.

Շնորհք, սէր և ածային սրբարար զօրութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սբյ:

Եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան:

Դպ. Ամէն եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Զդրունս զդրունս ամե″։

Դպ. Ունիմք առ քեզ տէր ամենակալ։

Սրկ. Եւ գոհացարուք։

Դպ. Արժան եւ իրաւ։

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն ձեռնա-
մած աղօթեսցէ ի ծածուկ։

Արժա՛ն է ստուգապէս
եւ իրաւ՝ ամենայորդոր
փութով միշտ երկիր պա-
գանել փառաւորել
զքեզ Հայր ամենակալ։
Որ քոյին անքննելի եւ
արարչակից բանիւ՛դ զա-
նիծիցն բարձեր զկրձիմն։
Որ ժողովուրդ իւրեան
առեալ զեկեղեցի սեփ-
հականեա՛ց ընդհանրա-
ցեալս ի քեզ։
Եւ զննելի բնութեամբ
բաս ի կուսէն ամենա-
ւութեան՝ հաճեցար բը-
նակել ի մեզ։ Եւ նո-
րագործ աստուածապէս
ճարտարապետեալ՝ զեր-
կիրս երկինս արար։

Վասն զի որում ոչ հան-
դուրժէին առաջի կալ
զօրութիւնցն ջոկք՝ զոր
հուրբեալք ի փայլմնա-
ցայտ եւ յանմատոյց լու-
սոյ ածութեանդ։
Նովեալ պարգեւելով մարդ՝
յաղագս մերոյ փրկու-
թեան շնորհեաց
մեզ ընդ երկնա-
յինն պարել
զհոգեղէն
պարս։

Ի Ձայն։

Եւ ընդ սերովբէսն եւ
ընդ քերովբէսն միաձայն
սրբասացութեամբ յօրի-
նել նուագս. եւ համար
ձակապէս գոչելով
աղաղակել ընդ
նոսին եւ
ասել։

Դպիրքն

Սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց լի են երկինք
եւ երկիր փառօք քո օրհնու″։

Մինչ

ե

Մինչ նոքա երգեն ․ ՚Քահանայն բազ-
կատարած աղօթէ ՚ի ծածուկ։

Սուրբ՝ սուրբ ես ճշմարտա-
պէս եւ ամենասուրբ ․ եւ ո՞վ
ոք պարծեսցի բովանդա-
կել բանիւ զքո՛ ՚ի մեզ
զանձրեւեալ բարերարութեն
զեղմունս ։ Որ եւ անդէն
իսկ ՚ի նախնումն զան-
կեալն ընդ մեղօք զանա-
զան եղանակօք՝ խնամեալ
սփոփեցեր ։ Մարգարէ-
իւք , օրինացն տրէչութ ,
քահանայութեամբ , եւ
ստուերակերպ երինջուցն
մատուցմամբ ։

Իսկ ՚ի վախճան աւուրցս
այսոցիկ՝ զբովանդակ իսկ
զպարտեացս մերոց խզեալ
զձեռագիրն ։ Տուր մեզ
զորդին քո՛ միածին , պար-
տապան եւ պարտս ․ զենու-
մն եւ օծեալ ․ գառն եւ
երկնաւոր հաց ․ քահա-
նայապետ եւ պատարագ ։

Օ

Վասն զի ինքն է բաշ-
խող ․ եւ նոյն ինքն բաշխի
՚ի միջի մերում միշտ ան-
ծախապէս ։

Վասն զի եղեալ հաւաս-
տեաւ եւ առանց ցնորից
մարդ ․ եւ անշփոթ միաւո-
րութեամբ մարմնացեալ
յածածնէն եւ ՚ի սր կու-
սէն մարիամայ ։

Ճանապարհորդեաց ընդ-
ամ կիրս մարդկային կեն-
ցաղոյս առանց մեղաց ։
Եւ յաշխարհակեցոյցն՝
եւ առիթն փրկութեան
մերոյ՝ եկեալ կամաւ
՚ի խաչ ։

Առեալ զհացն՝ ՚ի սուրբ
յածային՝ յանմահ՝ յանա-
րատ՝ եւ յարարչագործ՝ ՚ի
ձեռս իւր ․ օրհնեաց՝ գո-
հացաւ՝ եբեկ՝ եւ ետ իւ-
րոց ընտրեալ սուրբ եւ
բազմեալ աշակեր-
տացն ասելով ։

Առէք

՚ի Ձայն:

Առէ՛ք Կերէ՛ք Այս է՛
ՄԱՐՄԻՆ ԻՄ՝
որ վասն ձեր և բազմաց
բաշխի ՚ի քաւութի՟ն և
՚ի թողութիւն մեղաց:

Ի ծածուկ:

Նոյնպէս և զբաժակն ա_
ռեալ. Օրհնեաց՝ գոհա
ցաւ՝ էարբ՝ և ետ իւրոց
ընտրեալ ո͞ց և բազմեալ
աշակերտացն ասելով:

՚ի Ձայն:

Արբէ՛ք ՚ի սմանէ
Ամենեքեան. Այս է՛
ԱՐԻՒՆ ԻՄ՝
Նորոյ ուխտի, որ յաղագս
ձեր և բազմաց հեղանի
՚ի քաւութիւն և ՚ի թո_
ղութիւն մեղաց:

Ի ծածուկ:

Եւ զայն միշտ ի յիշա
տակ առնել պատուիրան
աւանդեաց մեզ բարերար
Ի

իս
որդին քո միածին: Եւ
իջեալ ՚ի ստորինս, վայրս մա
հու մարմնովն՝ զոր ՚ի մեր
մէս ընկալաւ յազգակցու
թէ: Եւ զփակս դժոխոցն
արարեալ հզօրեղապէս:
Ա՛յ զքեզ միայն ծանոյց
մեզ ճշմարիտ ա͞ծ՝ զա͞ծ
կենդանեաց և մեռելոց:

Եւ առնու զՕծնայն ՚ի ձեռն
Եւ ասասցէ ՚ի ծածուկ.

Եւ արդ մեք տէր՝ ըստ
այսմ հրամանատուութե͞ն յա
ռաջ բերեալ զայս խոր_
հուրդ փրկական մարմնոյ
և արեան միածնի քո:
Յիշեմք զդորա որ վ͞ս մեր
զփրկագործ չարչարանսն:
Զկենսատու խաչելու͞թն:
Զերեքօրեայ թաղու͞մն:
Զերանելի յարու͞թն:
Զա͞ծային համբարձու͞մն:
Զնստելն ը͞ն աջմէ քո հայր
Զահաւոր և զփառաւո
րեալ զմիւսանգամ գա_
լուստն խոստովանիմք
և օրհնեմք:

Իբ

Եւ զընծայման տաճարն ինչ բարձրացու- ցեալ մատուցանէ առ Հայր։
Եւ դիցէ ՚ի վերայ սրբոյ սեղանոյն ասելով ՚ի Ձայն։

Եւ զքոյս՝ ՚ի քոյոց՝ քեզ մատուցանեմք ըստ ամի և յաղագս ամենեցուն։

Դպ Ամէն օրհնեալ ես Տր։

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն բազկատարած ասասցէ ՚ի ծածուկ։

Զքեզ արդարև Տր Ած մեր գովեմք. և զքեզն գո- հանամք հանապազ։ Որ զանց արարեր զմերով ա- նարժանութս. այսպիսի ա- հաւոր և անպատում խոր- հրդոյ կարգեցեր պաշտօ- նեայս։ Ոչ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ թափուր եմք և միշտ ունայն գտանիմք հանապազ։ Այլ ՚ի քո բազմազեղ ներողութեն- ցդ ապաւինեալ հա- մարձակիմք մերձենալ ՚ի սպասաւորութն մարմնոյ և արեան միածնի քոյ Տն մե- րոյ և փրկչին Յի Քի. ո- րում վայելէ փառք իշ։

՚ի Ձայն.

Խաղաղութի ամենեցուն։

Դպ Եւ ընդ հոգւոյդ քում.

Սրկ Աստուծոյ երկիրպագեսցուք.

Դպ Առաջի քոյ տէր.

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն խոնարհեալ երկիրպագցէ սեղանոյն և ասասցէ։

Երկիր պագանեմք՝ և ա- ղաչեմք՝ և խնդրեմք ՚ի քէն բարերար Ած։ Առաքեա՛ ՚ի մեզ և յառաջի եդեալ ընծայս այս՝ զմշտնջենա- ւոր Հոգակից քո՛ և զէակից Սբ Հոգիդ։

Դպ Որդի Այ որ պատարագ՟.

Եւ կացեալ սարկաւագն առ ընթեր քահանային երկիւղիւ և զգուշութբ մեծաւ։
Եւ ասասցէ ՚ի ցած Ամէն օրհնեա՛ Տր։
Եւ քահանայն խաչակնքեսցէ զընծայսն ասելով ՚ի ծածուկ։



ՐՈՎ. Զ. հացս օրհնեալ մարմին ճշմար- տապէս արաս- ցես Տն մերոյ և փրկչին Յի Քի։

Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Որով զհացս և զգինիս օրհնեալ մարմին և արիւն ճշմարտութեամբ արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի փոխարկելով Հոգւովդ քով Սրբով:

Եւ երիցս կրկնեսցէ.

Ապա ասասցէ ՚ի ձայն.

Որզի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս, յանդատապարտութիւն ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց:

Եւ քահանայն պատուհեալ ոչ բարձրագոյն քան զնախնին զձեռն իւր տարածեալ, այլ՝ խոնարհագոյն. Եւ զայն ՚ի նոյն յառեալ աղօթեսցէ ՚ի ծածուկ.

Առլա՛ շնորհեա՛ զսէր ըստ հաստատութեան և զըղձալի ըստ խաղաղութեան ամենայն աշխարհի: Սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց: Քահանայից: Սարկաւագաց: Թագաւորաց: Աշխարհի: Իշխանաց: Ժողովրդոց: Ճանապարհորդելոց: Նաւելոց: Կապելոց: Վտանգելոց: Աշխատելոց: Եւ որք ՚ի պատերազմ մտեալ բարբարոսաց: Ամաց և օդոց շնորհեա՛ ըստ բարեխառնութեան. և անդոց զպտղաբերութիւն: Եւ առ ննջեցելոց՚ իսպառապէս յաւիտեան զեփիւռն

իղ

փութացես զառողջութիւն։ Առաքեա՛ հանգո՛ զանձինս ամենեսեան յառաջադոյն 'ի քո զննջեցեալսն։

Զնախահարս։

Զհայրապետս։

Զմարգարէս։

Զառաքեալս։

Զվկայեալս։

Զեպիսկոպոսունս։

Զերիցունս։

Զսարկաւագունս։

Եւ զընաւ ուխտ եկեղեցւոյ քոյ սրբոյ։ Եւ զամենեսեան յաշխարհական կարգէ զարս և զկանայս հաւատով վախճանեալս։

'ի Ձայնս

Ընդ որս և մեզ այց արասցես բարերար Աստուած աղաչեմք։

Դպիրքն

Յիշեա տէր և ողորմեա։

Քահանայն։

Աստուածածնին սրբոյ կուսին մարիամու։ Եւ յոհաննու մկրտչին։ Ստեփաննոսի նախավկային։ Եւ ամենայն սրբոց եղիցի յիշատակ 'ի սուրբ պատարագս աղաչեմք։

Դպիրքն

Յիշեա տէր և ողորմեա։

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն
Ձեռնամած կացցէ։

Առաքելոց սրբոց մարգարէից։

Եւ մինչ նորա երգեն զշարականս քահանայն ասասցէ զաղօթս զի 'ի միասին աւարտեսցին։

Յիշեա՛ տէր և ողորմեա, և օրհնեա՛ զսուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի քո։ Զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քոյ. և ազատեցեր խաչիւն սրբով։ Խաղաղեա՛ սմա անշարժ զխաղաղութիւն։ Յիշեա՛ տէր և ողորմեա, և օրհնեա՛ զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս՝ որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն 'ի մեզ զբանն ճշմարտութեան։

'ի Ձայն.

Նա՛ առաւել զեպիսկո-
պոսապետն մեր, և զպա-
տուական հայրապետն տէր Հայոց
զտէր (այս անուն) շնորհեսցես
մեզ ընդ երկայն աւուրս
ուղիղ վարդապետութբ:

Նա՛ դարձեալ սարկաւագն գայ 'ի սեղա-
նը · Նա՛ քարոզեսցէ բարձր:

Գոհութիւն և փառաբանութիւն մն'·

Մինչ նոքա քարոզեն Քահանայն ասա-
ցէ զաղօթս 'Ի ծածուկ:

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
և օրհնեա՛ զքո՛ առաջի կա-
ցեալ ժողովուրդս՝ և ըզ-
պատարագիս մատուցօղս:
Նա՛ պարգևեա՛ սոցա ըզ-
պիտոյն և զօգտակարն:
Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
և օրհնեա՛ զուխտաւորս
և զպտղաբերիչս Եկե-
ղեցւոյ քում սրբոյ · և որք
յիշեն զաղքատս ողորմա
ծութեամբ:
Նա՛ հատո՛ նոցա զպարտս
նոցա ըստ ընդարոյս առա

տուէ քում հարիւրապատիկ
աստ և 'ի հանդերձելումն:
Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
և գթա՛ 'ի հոգիս հանգու-
ցելոցն: Հանգո՛ զնոսա և
լուսաւորեա՛՝ և դասաւո-
րեա՛ ընդ սրս քո՛ յար-
քայութեանդ երկնից ·
և արժանի արա՛ ողորմու-
թեան քում:
Յիշեա՛ Տէր և զհոգի ծա-
ռայիս քոյ · (այս անուն) · և
ողորմեա՛ նմա ըստ մեծի
ողորմութեան քում, և
հանգո՛ յայտնութեանն 'ի
լոյս երեսաց քոց:
Նա՛ թէ կենդանի է՝
փրկեա՛ զնա յամ որոգայ
թից հոգւոյ և մարմնոյ:
Յիշեա՛ Տէր և զայնոսիկ
որք յանձնեցին մեզ յի-
շատակել յաղօթս, զկեն-
դանիս և զհանգուցեալս. և
կատարեա՛ զխնդիրս հայց
մանց նոցա և զմեր, ընդ-

իգ

ուղղորդն և որ լինէ փր-
կութեանբ ։

Եւ վարձատրեա՛ բոլորե-
ցունց զանանց և զերանե-
լի բարութիւնդ ։ Եւ զը-
տեալ զխորհուրդս մեր
տաճարացո՛ յընդունակու-
թիւն մարմնոյ և արեան
միածնի քոյ տն մերոյ և
փրկչին յի. քի. ընդ որում
քեզ հօր ամենակալի հան-
դերձ կենդանարար և ա-
զատիչ սբ հոգւովդ ։
վայելէ փառք իշ՛՛ ։

՚Յաշմանոյն դարձցի և խաչակնքեսցէ և ասասցէ ՚ի ձայն ։

Եւ եղիցի ողորմութիւն
մեծին այ և փրկչին մերոյ
յի. քի. , ընդ ձեզ ընդ
ամենեսեանս ։

Դպ Ամէն և ընդ հոգւոյդ քում ։

Սրկ Ամէն ևս խաղաղութեան զտէր ա՛՛ ։

Ամենայն սրբովք զորս
յիշատակեցաք ևս առ ա՛՛ ։

Առ մատուցեալ սբ և՛՛ ։

Մինչ սարկաւագն քարոզէ՝ քահանայն ասասցէ ՚ի ծածուկ ։

Ած ճշմարտութե և հայր
ողորմութե գոհանամք ըզ-
քեզ ։ Որ ՚ի վեր քան զե-
րանելի նահապետացն, ըզ-
մեր պարտաւորելոցս առա-
ւել մեծարեցեր զբնութի ։
Զի նոցա ած կոչեցար.
իսկ մեզ՝ հայր հաճեցար
անուանել գթալով ։ Եւ
այժմ տր աղաչեմք զքեզ ըզ-
զայսպիսի առ ՚ի քէն զնո-
րոգ և զպատուական ան-
ուանադրութեանս շնորհ ։
Օրըստօրէ պայծառա-
ցուցեալ ծաղկեցո՛ ՚ի մէջ
եկեղեցւոյ քում սրբոյ ։

՚ի ձայն

Եւ տուր մեզ համարձա-
կաձայն բարբառով բա-
նալ զբերանս մեր կարդալ
զքեզ երկնաւոր հայր,
երգել և ասել ։

Եւ

Ապա Դպիրքն Բազկատարած Աղաղա- կեսցեն․

Հայր մեր որ յերկինս ես մինչ եղի"։

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն աղօ- թեսցէ Ի ծածուկ․

Տէ՛ր տէրանց Ա͞Ծ աստուա- ծոց․ Թագաւոր յաւիտենա- կան․ արարիչ ա͞մ արարա- ծոց, հայր Տ͞Ն մերոյ Յ͞Ի Ք͞Ի։ Մի՛ տար զմեզ ՚ի փորձու- թիւն, այլ փրկեա ՚ի չարէ և ապրեցո՛ ՚ի փորձութէ͞Ն։

՚Ի Ձայն

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։

Խաղաղութի՛ ամենեցուն։

Դպիրքն

Եւ ընդ հոգւոյդ քում․

Սարկաւագն

Աստուծոյ երկրպագեսցուք․

Դպիրքն

Առաջի քո Տէր․

Սարկաւագն

Օրհնեա՛ տէր․

Քահանայն խոնարհեսցի և ա͞մ ժողո- վուրդն ընկեսցի ՚ի ծունկս․ Ապա Քահանայն աղօթեսցէ ՚Ի ծածուկ․

Որ աղբիւր ես կենաց և բղխումն ողորմութեան հո- գիդ Տ͞Ր։ Ողորմեա՛ ժողովր- դեանս, որք խոնարհեալ երկիր պագանեն Ա͞ԾՈւԹ- քում։ Պահեա՛ զսոսա ամբողջս, տպաւորեա՛ յոգւոջ սոցա՛ զձև մարմ- նոյ ցուցակի։ Առ ՚ի ժա- ռանգութիւն և ՚ի վիճակ հանդերձելոց բարեաց։

՚Ի Ձայն

Քրիստոսիւ Յիսուսիւ Տ͞Րամբ մերով․ ընդ որում քեզ Հոգւոյդ Ս͞Բ և Հօր ամենակալի վայելէ փառք իշխանութիւն և պատիւ․ այժմ և միշտ և՞։

Ապա քահանայն առցէ զսուրբ հացն ՚ի ձեռն․ Ապա սարկաւագն ձայնեսցէ բարձր․

Պռօսխումէ՛․

իր

Եւ քահանայն բարձրացուցանէ աչնէրն ամենայն ժողովրդեանն

Եւ ասասցէ ի ձայն.

Ի Սրբութիւն Սրբոց:

Դպիրքն Բարձր Ձայնիւ,

Միայն սբ. միայն տր. յն քս.

Քահանայն:

Օրհնեալ Հայր Սուրբ ԱԾ Ճշմարիտ:

Դպիրքն: Ամէն.

Քահանայն.

Օրհնեալ Որդի Սուրբ ԱԾ Ճշմարիտ:

Դպիրքն: Ամէն.

Քահանայն.

Օրհնեալ Հոգին Սուրբ ԱԾ Ճշմարիտ:

Դպիրքն: Ամէն.

Քահանայն,

Օրհնութի՛ւն Եւ փառք Հօր Եւ Որդւոյ Եւ Հոգւոյն Սբյ, Այժմ:

Դպիրքն: Ամէն.

Հայր ՍԲ Որդի ՍԲ Հոգի ՍԲ Օրհ":

Ա

Եւ մինչ նոքա երգեն զայս, Քահանայն խոնարհեսցի եւ աղօթեսցէ

ի ծածուկ:

Նայեա՛ց տէր մեր յս քս յերկնից ի սրբութենէ քումմէ, եւ յաթոռոյ փառաց թագաւորութեան քոյ. եկ ի սրբել եւ ի կեցուցանել զմեզ: Որ ընդ հօր նստիս եւ աստ պատարագիս: Արժանի արա՛ տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ եւ ի պատուական արենէ. եւ ի ձեռն մեր ամ ժողովրդեանս:

Եւ զայս ասացեալ երկիրպագեսցէ եւ համբուրեսցէ զսեղանն:

Եւ առեալ զսուրբ Մարմինն ուղ թացցէ յանարատական Արեանն եւ ասասցէ.

Տէր մեր որ կոչեցեր զմեզ յանուն միածնի որդւոյ քոյ քրիստոնեայս. եւ շնորհեցեր մեզ մկրտութի՛ւն հոգեւոր առ աւազանաւն ի թողութի՛ւն մեղաց. եւ արժանի

նի արարեր զմեզ հաղոր-
դել սր̃ մարմնոյ և արեան
միածնի քո։ Եւ այժմ
աղաչեմք զքեզ Տր̃՝ արա՛
զմեզ արժանի ընդունել
զսր̃ խորհուրդս զայս մեզ
՚ի մեղաց թողութիւն։
Եւ գոհութի՛ փառաւորել
զքեզ ընդ Որդւոյ և սր̃
Հոգւոյդ այժմ և՛։

Եւ բարձրացուսցէ անկերև ծածկո-
ցեանն և ասասցէ ՚ի Ձայն։

Ի սր̃ ՚ի սր̃ պատուական
մարմնոյ և յարենէ Տն̃
մերոյ և փրկչին յի̃ քի̃։
Ճաշակեսցուք սրբութի՛
որ իջեալ ՚ի յերկնից բաշ-
խի ՚ի միջի մերում։
Սա է Կենաց, Յոյս,
Յարութի՛, Քաւութի՛,
Եւ թողութիւն մեղաց։
Սաղմոս ասասցէք Տն̃ Այ մե՛։
Սաղմոս ասասցէք երկնա-
ւոր Թագաւորին մերում
անմահի, որ նստի ՚ի քառա-
քերոբէական։

Ի.



Սարկաւագն ձայնեսցէ։

Սաղմոս ասասցէք տեառն Այ մերում։

Եւ Դպիրքն Եղանակեսցեն։

Քս̃ պատարագեալ բաշխի ՚ի մ՛։

Մինչ Նորա երգեն, Քահանայն առցէ
զՍուրբն ՚ի ձեռսն։ Եւ հաղորդեսցէ
Սրբութեամբ Սրբովն։

Զոր Օրհնութի՛, կամ
զոր Գոհութի՛ ՚ի վերոյ
Հացիս Եւ բաժակիս
մատուցուք։
Ըստ յր̃ զքեզ միայն օրհ-
նեմք համերձ Հարբ և
ամենասր̃ Հոգւովդ այ՛։

Դարձեալ ասասցէ։

Խոստովանիմ և հաւա-
տամ, զի դու ես Քրիստոս
որդի Այ, որ բարձեր ըզ-
մեղս աշխարհի։

Եւ բեկեալ արկցէ ՚ի բաժակն Արեան
ասելով։

Լրումն Հոգւոյն Սրբոյ։

Եւ ապա Քահանայ զի՛ մասն ՚ի ձեռն,
Ասասցէ արտասուօք և գոհութեամբ
առ Հայր և Որդի ՚ի ծածուկ։

Հայր

Ե.

# ԱՂՕԹՔ

Տ որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ միածնի քոյ։ Եւ լուսաւորեցեր մկրտութեամբ հոգևոր աւազանին։ Արժանի արա ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն. տպաւորեա ի մեզ զշնորհ հոգւոյդ սրբոյ, որպէս ի սուրբ առաքեալսն որք ճաշակեցին և եղեն մաքրիչք ամենայն աշխարհի։ Եւ արդ՝ Տէր հայր բարերար, զհաղորդութիւնս զայս մանաւանդ ճաշակմանն երեկոյին աշակերտացն, բառնալով զխաւար մեղաց. մի հայիր յանարժանութիւնս իմ. և մի արգելցես զշնորհս հոգւոյդ սրբոյ։ Այլ ըստ անբաւ մարդասիրութեան քում, պարգևեա

զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց։ Որպէս խոստացաւ և ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս թէ՝ ամէն որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, կեցցէ ի յաւիտեան։ Արդ՝ արա զսա մեզ ի քաւութիւն որք կերիցեն և արբցեն ի սմանէ, հանցեն զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Գոհանամ զքէն Քրիստոս Թագաւոր, որ արժանի արարեր զանարժանս հաղորդել սուրբ մարմնոյ և արեան քո։ Եւ այժմ աղաչեմ զքեզ մի լիցի սա ինձ ի դատապարտութիւն, այլ ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց. առողջութիւն հոգւոյ և մարմնոյ. և ի կատարումն ամենայն

գոր

գործոց առաքինութե̅ն։

Որպէս զի սրբեսցէ սա՛ զշունչս իւր. և զհոգի և զմարմին իւր։ Եւ արասցէ զիս տաճար և բնակարան ամենասուրբ երրորդութեանդ։ Զի ընդ սոսա քո՛ արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ ո̅ր հոգւոյդ սրբոյ։

Յօհաննու Ոսկեբերանին
Աղաչեալ Աղօթք։

Գոհանամ և մեծացուցանեմ և փառաւորեմ զքեզ տ̅ր ա̅ծ իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուր յայսմիկ հաղորդակից լինել ա̅ծայինն և սոսկալի խորհրդոյ քում. անարատ մարմնոյդ և պատուական արեանդ. վ̅ն այսորիկ զսոսա՛ ՚ի բարեխօսութ̅ն ունելով, աղաչեմ յա̅մ աւուրս և ՚ի ժամանակս կենաց իմոց ընդ սրբութե̅ն քոյ պահեա՛ զիս։ Ո̅վ զի յիշելով զչարդրութիւնս քո՛ և կենդանի եղէց ընդ քեզ։ Որ վ̅ն մեր չարչարեցար և մեռար և յարեար. մի՛ մերժեսցի տ̅ր իմ և ա̅ծ խորտակեցին, կնքելով անձին իմոյ պատճական Սրբեալ քով։ Ամենակարող մաքրեա՛ զիս սոքօք յամենայն մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ։

Ամրացո՛ զկեանս իմ տ̅ր, յա̅մ փորձութենէ. և զպատերազմողն իմ դարձո՛ յինէն յետս, պատկառեալ և ամաչեցեալ որչափ յառանէ ՚ի վ̅ր իմ։ Ամրացո՛ զգնացս մտաց և լեզուի իմոյ, և զա̅մ ճանապարհս մարմնոյ իմոյ։ Եկ՛ր հանապազորդ ընդ իս, ըստ անսուտ խոստմանց քոց, թէ որ ուտէ զմարմին իմ և

և ըմպէ զարիւն իմ, նա՛
յիս բնակեսցի և ես 'ի
նմա: Դու տացես մեզ
զաստէրդկացն զգանս ած-
ային անլուծանելի հրա-
մանաց քոց: Քանզի
դու ես աստուած ողորմու-
թեան, և գթութեան և
մարդասիրութե՛ և պար-
գևիչ ամենայն բարեաց·
և քեզ վայելէ փառք հան-
դերձ Հարբդ և ամենասուրբ
Հոգւովդ այժմ և միշտ":

Ապա տեառնագրեսցէ զինքն · և
խնդրեսցէ 'ի Ճշմարտէն Այ զպէս պէս
հայցուածս անձին իւրոյ · և ժողովր-
դեան, և աշխարհի · և թողութիւն
խնդրեսցէ իւրոյ յանցաւորացն · թշ-
նամեացն և ատելեացն: Ապ՛ անդէն
ահիւ և դողութեամբ ճաշակեսցէ 'ի
մարմնոյն · և արբցէ 'ի բաժակէն
ասելով:

Հաւատամ հաստատ յամե-
նասուրբ Երրորդութիւն 'ի Հայր
և յՈրդի և 'ի Հոգին սբ:
Հաւատամ ճաշակեմ զսր
և զկենդանարար և զփըր-
կագործ Մարմինս քո՛ քս

Ս·

ած իմ յս 'ի թողութիւն
մեղաց իմոց:
Հաւատամ ըմպեմ զսր-
բարար և զմաքրիչ արիւնս
քո՛ քս ած իմ յս 'ի թո-
ղութիւն մեղաց իմոց:
Մարմին քո՛ անապական
լիցի ինձ 'ի կեանս: Եւ
սբ արիւն քո՛ 'ի քաւութն
և 'ի թողութիւն մեղաց:

Եւ սարկաւագն հաղորդեսցի · և յետ
հաղորդելոյն գոչէ առ ժողովուրդն և
ասէ բարձր:

Երկիւղիւ և հաւատով յառաջ մա":

Եւ դպիրքն Բարձր ձայնիւ:

Աստուած մեր և տէր մեր երևե":

Եւ հաղորդեսցի նոր ձեռնադրեալն
բայց ոչ 'ի բեմանն, այլ յափին սալով
զսրբութիւնն · և ամենայն արժանա-
ւորքն հաղորդեսցին · և յետ հաղոր-
դելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն
ընծայիւն և ասասցէ:

Կեցո՛ տէր զժողովուրդս
քո՛ և օրհնեա՛ զժառան-
գութիւնս քո՛ · հովուեա՛
և բարձրացո՛ զսոսա յայմ
հետէ մինչև յաւիտեան:

Եւ դպիրքն Երգեսցեն:

Լցաք 'ի բարութեանց քոց տէր Հա":

Բա

Գոհանամք զքեն Հայր ամենակալ որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ զսուրբ եկեղեցի, տաճար սրբութե ուր փառաբանի անուն սուրբ Երրորդութեդ։

Ալէլուիա։

Գոհանամք զքեն Քրիստոս թագաւոր՝ որ պարգեւեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով եւ արեամբ քով սրբով։ Շնորհեա զքաւութիւն եւ զմեծ ողորմութիւն։

Ալէլուիա։

Գոհանամք զքեն Հոգիդ ճշմարիտ՝ որ նորոգեցեր զսուրբ եկեղեցի։ Անարատ պահեա հաւատով Երրորդութեանդ յայսմհետէ մինչեւ յաւիտեան։

Ալէլուիա։

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչ.
Եւս հաւատով ընկալեալքս ...։
Դպ. Գոհանամք զքեն Տէր որ կե...։

Ի



Գոհանամք զքեն Քրիստոս Աստուած մեր որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ի սրբութիւն կենդանութեան։ Սովին պահեա զմեզ սուրբ եւ անարատ, բնակեցեալ զմեօք քո աստուածային խնամօքդ։ Արածեա զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց եւ բարերարաց։ Որով ամրացեալք յամ բանսարկուին ընդդիմութեանց, քում եւ եթ արժանի եղիցուք լսել ձայնի։ Եւ քեզ միայնոյ քաջայաղթ եւ ճշմարիտ հովուին հետեւել։ Եւ առ ի քէն ընդունելին զպատրաստեալ տեղի յարքայութեան երկնից։ Աստուած մեր եւ Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս։ Որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ այժմ եւ։

Է

Խաղաղութիւն ամենեցուն.

Սքանչելին , անհաս , եր֊
րեակ միութեամբ , հաս֊
տիչ , ընդունօղ , և ան֊
ճառելի , միասնական և
երրորդութեան , փայլէ
փառք իշխանութեան և՛:

Եւ ապա առցէ զաւետարանն սուրբ ՚ի ձեռն իւր . Եւ երկիր երկրպագեալ համբուրեսցէ զնշ. սեղանոյն . Եւ [illegible]֊ լով ՚ի մէջ եկեղեցւոյն ասասցէ զաղօթս ՚ի Ձայն.

Որ օրհնես զայնոսիկ՝ որք
օրհնեն զքեզ Տր՝ և սր֊
բես զյուսացեալս ՚ի
քեզ . կեցո՛ զժողովուրդս
քո՛ և օրհնեա՛ զժառան֊
գութիւն քո՛: Զլրումն
եկեղեցւոյ քո պահեա՛:
Սրբեա՛ զսոսա որք ըղձու֊
նեցին սիրով զվայելչութի֊
տան քոյ: Դու զնոսա փա֊
ռաւորեա՛ մեծ զօրու֊
թեամբ քով . և մի՛ թողուր
զյուսացեալս ՚ի քեզ:
Զխաղաղութիւն պարգևեա՛
ամ աշխարհի:

Եկեղեցեաց , քահանայից
թագաւորաց , քրիստո֊
նէից և զինուորեալ ման֊
կանց նոցա. և ամ ժողովր֊
դեան: Զի ամ տուրք
բարիք . և ամ պարգևք
կատարեալք , ՚ի վերուստ
են իջեալք առ ՚ի քէն:
Որ ես Հայր լուսոյ և քեզ
վայելէ փառք իշխա՛ն:

Եւ Դպիրքն ասասցեն Եղիցս.

Եղիցի անուն տեառն օրհնեալ.

Եւ քահանայն դարձցի առ ժողովուրդն ասասցէ ՚ի Ձայն.

Կատարումն օրհնաց և
մաղթանաց դու ես քրիս֊
տոս ած փրկիչ մեր:
Որ լցեր զմեզ հայրական
ամօրհնութիւնս քո:
Լի՛ց և զմեզ հոգւովդ
քով սրբով:

Սարկաւագն Օրթի.

Քհ Խաղաղութիւն ամե՛:

Դպ Եւ ընդ հոգւոյդ քում.

Սրկ Երկիրպագութիւն լուծարուք.

Սուբ

Սուրբ Աւետարանն որ ըստ Յովհաննու
Գլուխ Առաջին. Համար մէկ.

Ի հօրէ ...

Ի ՍԿԶԲԱՆԷ ԷՐ
Բանն. եւ Բանն էր
առ Ած. եւ Ած էր Բանն։
Նա էր ի սկզբանէ առ Ած։
Ամենայն ինչ նովաւ եղեւ
եւ առանց նորա եղեւ եւ ոչ
ինչ որ ինչ եղեւն։ Նովաւ
կեանք էր. եւ կեանքն էր
լոյս մարդկան։ Եւ լոյսն
ի խաւարի անդ լուսա-
ւորէ. եւ խաւար նմա ոչ
եղեւ հասու։ Եղեւ այր մի
առաքեալ յԱյ՝ անուն նմա
Յովհաննէս։ Սա եկն ի
վկայութիւն, զի վկայեսցէ
վս լուսոյն. զի ամենեքին
հաւատասցեն նովաւ։
Ոչ էր նա լոյսն այլ զի
վկայեսցէ վասն լուսոյն։
Էր լոյսն ճշմարիտ որ լու-
սաւոր առնէ զամ մարդ
որ գալոց է յաշխարհ։
Յաշխարհի էր. եւ աշխարհ
նովաւ եղեւ. եւ աշխարհ զնա
ոչ ծանեաւ։ Յիւրսն եկն

Ժէ

եւ իւրքն զնա ոչ ընկալան։
Իսկ որք ընկալանն զնա
ետ նոցա իշխանութիւն որդիս
Այ լինել. որոց հաւատան
յանուն նորա։ Որք ոչ
յարենէ, ոչ ի կամաց մար-
մնոյ եւ ոչ ի կամաց առն
այլ յԱյ ծնան։ Եւ Բանն
ՄԱՐՄԻՆ
եղեւ եւ բնակեաց ի մեզ։
Եւ տեսաք զփառս նորա՝
զփառս իբրեւ զմիածնի
առ ի հօրէ լի շնորհօք
եւ ճշմարտութեամբ։

Սրկ. Մե՛ խաղաղութեան աղաչեսցուք զՏէր։

Քհն. Պահպանեա զմեզ Քս։

Սրկ. Օրհնեցէք զՏէր յամ ժամ։

Եւ քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն եւ ասասցէ բարձր։

Օրհնեալ եղիցուք ի Տն։

Եւ դպիրքն ասասցեն.

Ի ...եր պարծեսցի անուն Տն։

Եւ ընդ աւարտման դպրաց՝ բաշխեսցի նշխարն։ Եւ յաւարտման Հաւատամքն դարձցի յարեւելս. Եւ փոխադրեսցէ ... ի սեղանոյն երիցս եւ ասասցէ։

Տր յամ Ած ողորմեա ինձ։

Եւ մնացեալ յաւանդատանն մերկասցի զզգեստաւորսն. Եւ երթիցէ խաղաղութեամբ։

Յիշատակարան Սրբոյ Մատենիս.

Շնորհիւ Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. աւարտեցաւ որ գիրքս այս՝ որ կոչի ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ: որով՝ի ձեռն Սրբոյն քահանայից՝ կատարի Աստուածային խորհուրդ:

Տպագրեցեալ՝ի Հայրապետութեան լուսանկար Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսին ամ՝ Հայոց:

Եւ՝ի Պատրիարգութեան Առաքելական Սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի Տեառն Յովակիմայ գերերջանիկ Պատրիարգի:

Եւ ՝ի Պատրիարգութեան մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Տեառն Զաքարիա Սրբազան Պատրիարգի: որոյ հրամանաւն տպեցաւ Աստուածային այս մատեան:

Արդ՝ որք կցեալ Աստուածային մատենիս այսմիկ՝ առաջին տպագրեցելոցն էին մաքրեցեալք և ստուգեալք. վասն զի ձեռնհասութեամբն ՝ի սեր նոյն պատճառագրին՝ մերոյ գրեալ երջանիկ հայրս մեր Յովակիմ Սրբազան Պատրիարգն՝ գերահրաշ Աթոռոյն Սրբոյ Երուսաղէմի բարով արդեամբքն եւ վերստին տպել յօրինուածս և նորակերպ տառիւք. որոյ՝ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և հոգւոյ և մարմնոյ ծնողացն և ամ. ազգացն և բոլոր խնամողաց և բարերարն եղիցի ՝ի շնորհաց նոյն պատճառագրին. Նաև դուք Սրբազնագոյն պատուականութեանցդ որք վայելէք զսոյն նորատիպ մատեանս, յիշեսջիք ՝ի խորհուրդ Սրբազնութեան պատճառագրին. զայսպէս առաջ Պատրիարգ հայրն մեր նոյն Սանդուխտ. և յիշատակողացդ՝ յիշեալ լիջիք ՝ի Քրիստոս Աստուծոյ մերում:

Նաև՝ յիշեսջիք զվարդապետն տպագրութեան՝ զՏէր Յովհաննէսն, և զորդի նորին զՏէր Պօղոսն, որ է կերտող նորաձև տառիցս. և զմիւս որդին զսրբազան Տէրտէր Յարութիւն. և զհամայն կենդանիսն և ննջեցեալսն.

Նաև զաշխատողն գործաւորսն՝ զբուրումն տիրացու որդի զտիրացու Օհաննէս և մեծ որդի զտիրացու Յովհաննէսն. և դուք յիշեալ լի՜ք: